ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

8050 ԿՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի

Կառուցման 2-րդ

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ

Ք. Գավառ *29.04.2025թ.*

Գավառի համայնքապետարանում տեղի ունեցավ «ՍՈԼԱՐՍԻՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում նախատեսվող 8050 ԿՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Մասնկացում էին ՇՄԱԳ -ի ներկայացուցիչներ, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, Գավառի համայնքապետարանի, Գավառի ավագանու անդամների, բնապահպանական ՀԿ-ների ներկայացուցիչներ, փորձագետներ և բնակիչներ

/մասնակիցների ցանկը կցվում է/:

ՇՄԱԳ-ի ներկայացուցիչ Սուսաննա Անտոնյանը ներկաներին տեղեկացրեց արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ընթացքում նախատեսվող բնապահպանական ռիսկերը և դրանց կանխարգելման եղանակները:

«Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի Գլխավոր տնօրենի տեղակալ Ռաֆայել Քոչարյանը ներկայացրեց ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը և նախագծին վերաբերվող մանրամասներ:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչ Մարատ Ղուրշուդյանը իր խոսքում նշեց, որ Գավառում ծրագրի իրականացումը ողջունելի է և դա իր դրական ազեցությունը կունենա մաքուր էներգիայի, նոր աշխատատեղերի ստեղծման առումով:

Ծրագրի բնապահպանական հետևանքների և արդյունավետության մասին խոսեց Գավառի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արծրուն Ղուրշուդյանը:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և Գավառի համայնքապետարանի ներկայացուցիչները և բնակիչները ուղղեցին իրենց հետաքրքրող հարցերը:

Կարևորելով ծրագրի հատկապես սոցիալական բաղադրիչը՝ հանրային լսման մասնակիցները իրենց դրական կարծիքը հայտնեցին իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

Գավառի համայնքապետարանի ներկայացուցիչ, համայնքի ղեկավարի օգնական Արծրուն Դվոյանը եզրափակիչ խոսքում ողջունեց Գավառ համայնքում ֆոտովոլտային կայանի կառուցումը և նշեց, որ համայնքապետարանը պատրաստակամ է հետագա աշխատանքներում ևս աջակցելու ծրագրի իրականացմանը:

Նիստի արձանագրող՝ **Գավառի համայնքապետարանի**

մամուլի քարտուղար՝ **Ա. Մանուկյան**